ՄՈՐՈՒՍ ՀԱՍՐԱԹՅԱՆ

(Մենդյան 90-ամյակի առթիվ)

Հայագիտության երախտավորների շարքում իր արժանի տեղն ունի անվանի պատմաբան-բանասեր, գիտության վաստակավոր գործիչ, Հայաստանի գիտությունների ակադեմիայի թղթակից անդամ Մորուս (Մարգար) Ստեփանի Հասրաթյանը (1902—1979)։ Նա ծնվել է Սիսիանի շրջանի Ախլաթյան գյուղում, հայրենասեր ու ավանդապահ մի ընտանիքում։ Հասրաթյանի մեծ պապը՝ Մելիք Սարուխանը, երկրամասի մեծամեծների շարքում մասնակցել էր Խրայել Օրու գլխավորած Անգեղակոթի 1699 թ. նշանավոր ժողովին։ Միջնակարգ կրթությունը ստանալով Բաքվում, Հասրաթյանը վերադառնում է հայրենիք։ 1922—1924 թթ. սովորում է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում, որն ավարտելուց հետո մանկավարժական ու գործնական աշխատանքներ է կատարում Հայաստանի մի շարք շրջաններում։ 1931—1932 թթ. ասպիրանտական ուսումնառությունը անց է կացնում Լենինգրադում, Նիկողայոս Մառի և Հովսեփ Օրբելու ղեկավարությամբ։

Ասպիրանտուրան ավարտելուց հետո իրեն ամբողջովին նվիրում է գիտական աշխատանքի։ 1933 թ. Մ. Հասրաթյանը Երևանի Պատմության և նյութական մշակույթի ինստիտուտի տնօրենի տեղակալ էր, 1934—1936 թթ.՝ Հայաստանի հեղափոխության թանգարանի տնօրեն։

1937 թ. Մ. Հասրաթյանը նշանակվում է Մատենադարանի տնօրեն, զգալի աշխատանք կատարում հին ձեռագրերի ձեռք բերման, պահպանման և ուսումնասիրության ուղղությամբ։ Սակայն հայ մտավորականության լավագույն շատ ներկայացուցիչների նման նա նույնպես ենթարկվում է 1937 թ. մոլեգնող հալածանքներին։ Նա բանտարկվում է որպես «ազգայնական» և 1940 թ. աղատվում է միայն ծանր հիվանդության «շնորհիվ»։

Մ. Հասրաթյանի գիտահետազոտական աշխատանքները 1940 թ. ընթանում էին ճարտարապետության, հնագիտության, բանասիրության և հայ ժողովրդի հին և միջին դարերի պատմության ուսումնասիրության գծով։ 1940—1941 թթ. նա աշխատում էր պատմական հուշարձանների պահպանության կոմիտեում և մասնակցում Ավանի VI դարի նշանավոր տաճարի ճարտարապետական և հնագիտական հետազոտությանը և նորոգմանը։ 1942—1946 թթ. աշխատում է գրականության ինստիտուտում, զբաղվում բանասիրության հարցերով, միաժամանակ վարում Հայաստանի նորաստեղծ գիտությունների ակադեմիայի հասարակագիտական բաժանմունքի գիտական քարտուղարի պաշտոնը։

1947 թ. տասը տարի անընդմեջ Մ. Հասրաթյանը ԳԱ պատմության ինստիտուտի աշխատակից էր և պատմության, հնագիտության հետ կապված բարդ ու կնճռոտ շատ պրոբ-

լեմների գիտական մշակման գործում մասնակից։ 1950 թ. նա մասնակցում էր Գառնիի հնագիտական արշավախմբի աշխատանքներին, միաժամանակ գլխավորում Զանգեզուրի հնագիտական պեղումները։ Սիսիանի շրջանում Մ. Հասրաթյանի կատարած պեղումների շնորհիվ հայտնաբերվեցին արժեքավոր շատ նյութեր։

Մ. Հասրաթյանը 1947-ին ուսումնասիրեց Հայաստանի հնագույն հուշարձաններից մեկը՝ Ծիծեռնավանքի եռանավ բազիլիկան, բացահայտեց դրա առանցքային նշանակություն ունեցող դերը հայ ճարտարապետության ձևաստեղծման ընթացքում։ Հայ ճարտարապետության պատմության բնագավառում նրա երկարամյա աշխատանքների արդյունքները ամփոփվեցին Վ. Հարությունյանի հեղինակակցությամբ 1975 թ. Բեյրութում լույս տեսած «Հայկական հուշարձանները նախապատմական շրջանից մինչև XVII դարը» մեծածավալ հատորում (հայերեն, ֆրանսերեն և անգլերեն լեզուներով)։

Մ. Հասրաթյանը եղել է հայ ժողովրդի պատմության առաջին դասագրքի ստեղծողներից մեկը։ Նրա գործուն մասնակցությամբ կազմված ձեռնարկը լույս տեսավ 1950-ական թթ., հայերեն և ռուսերեն լեզուներով։ Դասագրքում գրվեցին ու լուսաբանվեցին հայ ժողովրդի քաղաքական և սոցիալ-տնտեսական պատմության, պերիոդիզացիայի հետ կապված շատ բարդ ու կնճռոտ հարցեր։ Այդ դասագիրքը հետագայում միջնակարգ և բարձրագույն դպրոցների համար ձեռնարկներ ստեղծելու հիմք դարձավ և մեծապես դյուրացրեց այդ գործը։

Լայն ու բազմակողմանի էին Մորուս Հասրաթյանի գիտական հետաքրքրությունների շրջանակները։ Նա իր գրավոր ու բանավոր ելույթներում անգրաղառնում, ամենայն խորությամբ քննարկում ու վերլուծում էր Հայաստանի պալեոլիթի դարաշրջանի, հայ ժողովրդի ծագման, հայ աղատագրական պայքարի, հասարակական-քաղաքական մտքի, հնագիտության, ճարտարապետության, բանասիրության պրոբլեմները։ Նա իր մեծ ուսուցիչներ Ն. Մառի, Հ. Օրբելու, Մ. Աբեղյանի, Հ. Աճառյանի, Գ. Ղափանցյանի և մյուսների արժանավոր աշակերտն էր, երիտասարդ սերնդի հետ նրանց կապող կամուրջը, հայագիտության ավագ սերընդի այդ մեծերի ավանդներն ու պատգամները կրտսերներին փոխանցողներից մեկը։

Մնայուն է Մորուս Հասրաթյանի վաստակը սայաթնովագիտության մեջ։ Շուրջ մեկ դար հետազոտողների ուշադրության կենտրոնում էր գտնվել միայն հայերեն Սայաթ-Նովան։ Հայ ընթերցողն անտեղյակ էր մեծ բանաստեղծից մեզ հասած վրացերեն ու ադրբեջաներեն խաղերից, որոնք իրենց ծավալով ու գրական արժեքով առնվազն զուգակշիռ են հայերենին։ Սայաթ-Նովայի հանճարի մեծությունը հնարավոր էր պատկերացնել միայն նրա եռալեզվյան ժառանգության մեկտեղումով։ Ադրբեջաներեն ու վրացերեն խաղերի հայացման այդ դժվարագույն գործին ձեռնամուխ եղավ Մ. Հասրաթյանը իր բանասիրական լայն պատրաստությամբ ու կուռ տրամաբանությամբ, անհրաժեշտ լեզուների խոր իմացությամբ և բանաստեղծական բնատուր ձիրքով։ Եվ նա այս խնդիրն իրականացրեց փայլուն հաջողությամբ, այնքան հարազատ Սայաթ-Նովայի լեզվին և ոճին, որ, ինչպես նշել է Պարույր Սևակը, «վրացերենից ու ադրբեջաներենից կատարած թարգմանությունները նույնիսկ բազմափորձ ընթերցողի մեջ այն պատրանքն են ստեղծում, թե դրանք թարգմանություններ չեն, այլ նորահայտ խաղեր»։

Մ. Հասրաթյանը նոր աստիճանի բարձրացրեց սայաթնովագիտությունը նաև մեծ բանաստեղծի ստեղծագործությունների նոր վերլուծություններով ու մեկնաբանություններով, գիտաքննական պրպտումներով ու հայտնաբերումներով, վերականգնեց կամ ճշգրտեց բանաստեղծական-տեքստաբանական շատ միավորներ։

Մանկավարժի բնատուր ձիրք ունեցող գիտնականը շուրջ կես դար դասախոսական աշխատանք էր կատարում Երևանի բանֆակում, Պետական համալսարանում, Խ. Աբովյանի անվան հայկական մանկավարժական ինստիտուտում։ Այստեղ նա վարել է հայ ժողովրդի պատմության ամբիոնը, իսկ 1957—1960 թթ. եղել է ինստիտուտի պրոռեկտորը։ Նրա հաղարավոր սաներից շատերը դարձան նշանավոր գիտնականներ ու մանկավարժներ, պետական աշքի ընկնող գործիչներ։

Մ. Հասրաթյանը իր արժանի տեղն ունի նաև թանգարանագիտության մեջ։ 1964—1975 թթ. նա գլխավորեց Հայաստանի մայր թանգարանի՝ պատմության պետական թանգարանի գործունեությունը։ Մեծ սիրով ու գործիմացությամբ կազմակերպեց հայ ժողովրդի դարավոր մշակույթի պահպանումը, հսկայական գործ կատարեց նյութական կուլտուրայի դանձերով թանգարանը հարստացնելու ուղղությամբ։

Մ. Հասրաթյանը մեկն էր այն քչերից, որ իր հարուստ դիտելիքները ի սպաս դրեց նաև սփյուռքահայությանը։ Բելգրադի Հայկազյան քոլեջի հրավերով նա 1965—1966 թթ. եղավ Լիբանանում։ Քոլեջում ու կրթական այլ հաստատություններում դասախոսություններ կարդաց, ստեղծեց հայագիտական բարձր կուրսերի կազմակերպմանն ու երիտասարդ հայագետների պատրաստմանը, հայրենիք-սփյուռք գիտական կապերի ամրապնդմանը։ Սփյուռքահայ մամուլը նրախտիքի ու ջնորհակալության բազմաթիվ էջեր է նվիրել նրա գործունեությանը։

Ինչպես նշել է «Նաիրի» թերթը, Մ. Հասրաթյանը այդ տարիների համար մեծ համարձակությամբ միասնություն և հայրենասիրություն էր սերմանում, ասելով՝ «Նախ հայ եղեք, Գետո կուսակցական, սիրեցեք ձեր հայրենիքը անկեղծորեն, սիրեցեք ճանաչելով նրա բոլոր գեղեցկությունները և նույնիսկ թերիները։ Պայման չէ, որ բոլոր հայերը մեկ կերպ մտածեն, մեկ կաղապարի մեջ ձուլվեն, բայց պայման է, որ բոլորս հայ մնանք, հայ զգանք»։

«Քայլող հանրագիտարանի» ճանաչում ունեցող Մ. Հասրաթյանին հաճախ կոչում էին նաև «բանավոր գիտնական»։ Նկատի էր առնվում այն հանգամանքը, որ նա իր ամբարած հարուստ դիտելիքները հրապարակայնորեն ու շռայլորեն ներկայացնում էր սովորող երիտասարդությանն ու գիտական հասարակայնությանը։

Իր բազմամյա գիտամանկավարժական գործունեության ընթացքում Մ. Հասրաթյանը գրել է պատմա-բանասիրական շատ աշխատանքներ, որոնց մի մասն է հրատարակվել։ 1985 թ. Հայաստանի գիտությունների ակադեմիան լույս ընծայեց «Պատմա-հնագիտական ուսումնասիրություններ» խորագրով ժողովածուն, որը, սակայն, ընդգրկում է Մ. Հասրաթյանի անտիպ գործերի մի մասը միայն։

Բազմակողմանի դիտելիքների, խորաթափանց ու արթուն մտքի տեր, համեստ և ուղղամիտ գիտնական Մորուս Հասրաթյանը իր արժեքավոր ներդրումն ունի հայագիտության մեջ։

ՀԳԱ թղթակից անդամ Վ. Բ. ԲԱՐԵՈՒԴԱՐՅԱՆ